ԿԱՐԾԻՔ

(պաշտոնական ընդդիմախոսի)

ԻԳ.00.02 - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը հայցող Անահիտ Արմենի Սերոբյանի «Թուրքիայի փափուկ ուժը Վրաստանի տարածաշրջանային ինտեգրման գործընթացներում» թեմայով ատենախոսության վերաբերյալ.

Անահիտ Արմենի Սերոբյանի «Թուրքիայի փափուկ ուժը Վրաստանի տարածաշրջանային ինտեգրման գործընթացներում» ատենախոսությունը գիտական ու գործնական արդիականություն ունեցող ուսումնասիրություն է: Արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ վերջին երկու տասնամյակների ընթացքում Թուրքիան հետևողականորեն ամրապնդել է իր ներկայությունը Հարավային Կովկասում՝ ձգտելով դառնալ տարածաշրջանային առանցքային դերակատար: Վրաստանի դերը պայմանավորված է նրանով, որ երկիրը գտնվում է ռազմավարական դիրքում, ձգտում է խորացնել համագործակցությունը եվրատլանտյան կառույցների հետ և համարվում է տարածաշրջանային էներգետիկ ու տրանսպորտային առանցքային հանգույց: Թուրքական փափուկ ուժի գործիքակազմը Վրաստանում դրսևորվում է բազմաբնույթ ձևերով՝ կրթական ծրագրերից ու մշակութային հաստատություններից մինչև տնտեսական նախագծեր: Այս ազդեցության աճը ոչ միայն փոխում է Վրաստանի ներքաղաքական ու հասարակական դինամիկան, այլև մեծ ազդեցություն է թողնում տարածաշրջանի ուժային հավասարակշռության և արտաքին քաղաքական գործընթացների վրա: Թուրքիայի ակտիվ քաղաքական ու մշակութային ներկայությունը հանգեցնում է նոր իրողությունների, որոնք պահանջում են գիտական մոտեցում և օբյեկտիվ գնահատում: Ուսումնասիրության նշանակությունը կայանում է նրանում, որ այն լրացնում է թուրքական փափուկ ուժի վերաբերյալ ուսումնասիրությունների բացը Վրաստանի համատեքստում՝ համադրելով թե՛ տեսական, թե՛ գործնական տեսանկյունները:

Ատենախոսության նպատակները գիտական են և ուղղված են թուրքական փափուկ ուժի դրսևորումների համակողմանի ուսումնասիրությանը Վրաստանի տարածաշրջանային ինտեգրման գործընթացներում: Ատենախոսության մեջ լուսաբանվել են այն գործոնները, որոնք նպաստում կամ սահմանափակում են դրա արդյունավետությունը տարբեր փուլերում: Հանգամանորեն ուսումնասիրվել է, թե ինչպես է Թուրքիայի մշակութային և կրթական ներկայությունը փոխկապակցվում տնտեսական ու էներգետիկ նախագծերի հետ՝ ստեղծելով ազդեցության համալիր համակարգ: Ատենախոսը գիտական մակարդակով վերլուծել է Թուրքիայի ներգրավվածության քաղաքական, տնտեսական, մշակութային և կրթական գործիքակազմը՝ դիտարկելով այն որպես ազդեցության բազմաշերտ մեխանիզմ: Հատուկ ուշադրություն է դարձվել պետական և ոչ պետական դերակատարների գործունեությանը, ինչպես նաև նրանց գործառույթների փոխազդեցությանը տարածաշրջանային քաղաքական դինամիկայի ձևավորման համատեքստում:

Հետազոտության արդյունքները կիրառելի են այն երկրների համար, որոնք գտնվում են արտաքին ազդեցությունների և տարածաշրջանային ինտեգրման գործընթացում: Վրաստանի օրինակը հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչպես է Թուրքիան ձևավորում իր փափուկ ուժի գործիքակազմը և ինչ հետևանքներ

ունի այն քաղաքական ու հասարակական դաշտի վրա: Ատենախոսությունը կարևոր է նաև գործնական տեսանկյունից, քանի որ այն կարող է ծառայել որպես վերլուծական հիմք փորձագետների և քաղաքականության մշակմամբ զբաղվող կառույցների համար:

Հեղինակը բազմակողմանի տեսական մոտեցումներ է կիրառել՝ առանձնացնելով Թուրքիայի փափուկ ուժի գործառույթի հիմնական չափորոշիչները և ընդգծելով դրանց նշանակությունը Վրաստանի քաղաքական և հասարակական համակարգի զարգացման գործում: Ուսումնասիրությունն ընդգծում է, որ յուրաքանչյուր երկիր ունի սեփական քաղաքական ու սոցիալ-մշակութային առանձնահատկությունները, ինչը ձևավորում է ազդեցության յուրահատուկ դինամիկա: Հատկանշական է, որ ատենախոսության միջոցով հնարավոր է վերհանել թուրքական փափուկ ուժի դրսևորումները և առանձնացնել ինստիտուցիոնալ խոչընդոտները, որոնք ազդում են տեղական գործընթացների վրա:

Հետազոտության կարևոր ուղենիշներից է այն, որ աշխատանքում մշակվել և առաջարկվել է «փափուկ ուժի» նոր սահմանում: Վրաստանի օրինակով ստեղծված վերլուծական մոդելը հնարավորություն է տալիս գնահատել արտաքին ազդեցության գործիքների կիրառման մեխանիզմները և կանխատեսել քաղաքական որոշումների արդյունավետությունը փոքր պետությունների համար, հատկապես բազմաբևեռ մրցակցության պայմաններում:

Հետազոտությունն ունի հարուստ գիտական և աղբյուրագիտական հենք, ուսումնասիրության ընթացքում օգտագործվել են Թուրքիայի փափուկ ուժի և տարածաշրջանային քաղաքական գործընթացների վերլուծության համար անհրաժեշտ գիտական ու վերլուծական նյութեր, պաշտոնական փաստաթղթեր, քաղաքական հայտարարություններ

Ատենախոսության մեջ առկա են նաև որոշակի թերություններ, կան բացթողումներ որոնցից ցանկանում ենք նշել հետևյալները՝

1. Թեև հեղինակը որպես հետազոտության օբյեկտ է սահմանել Թուրքիայի կողմից հարավկովկասյան տարածաշրջանում փափուկ ուժի գործիքակազմի կիրառումը, սակայն բուն ատենախոսության շրջանակներում փաստացի դուրս են մնացել Ադրբեջանում և Հայաստանի Հանրապետությունում թուրքական փափուկ ուժի գործիքակազմերին նվիրված հատվածները: Ադրբեջանին և Հայաստանին անդրադարձներ կան, այն էլ հպանցիկ, որոնք հիմնականում առնչվում են երկկողմ հարաբերությունների առանձին դրվագներին: Թեմայի արդիականությունից ելնելով՝ աշխատանքը կշահեր, եթե հեղինակն ավելի շատ զուգահեռներ տաներ և դիտարկեր հատկապես վերջին տարիներին, մասնավորապես՝ 2018թ-ից հետո ՀՀ-ում թուրքական «փափուկ ուժի» պրակտիկ դրսևորումների վրա:
2. Իհարկե, գնահատելի է հեղինակի «խիզախությունը» տալ «փափուկ ուժի» նոր սահմանում, միաժամանակ, հետազոտությունից պարզ չէ, թե ինչու՞մ են կայանում «փափուկ ուժի» դասական սահմանումների սահմանափակվածությունները, և ինչո՞վ է հեղինակի այս նոր սահմանումը հեշտացնում հիմնահարցով զբաղվող հետագա ուսումնասիրողների աշխատանքը, մանավանդ որ, ըստ իս, առաջարկվող սահմանումը ստացվել է ավելի երկարաշունչ և իմաստային որոշակի բարդություններ առաջացնող:

Բացի այդ, բուն ատենախոսության մեջ նույնպես բացակայում է «փափուկ ուժ» հասկացության քննական համապարփակ վերլուծությունն ու այդ համատեքստում նոր սահմանման առաջ քաշման գիտա-գործնական անհրաժեշտությունը:

3. Ատենախոսության առաջին գլխի 1.1 ենթաբաժինը վերնագրված է «Վրաց-թուրքական հարաբերությունների զարգացման տեսական ասպեկտները. փափուկ ուժի գործիքակազմը», մինչդեռ բովանդակությունը բացառապես վերաբերում է «փափուկ ուժի» տեսական հայեցակարգին: Վերնագրից ստացվում է, որ «փափուկ ուժի» հայեցակարգի հիմնադիր Ժ. Նայը խոսել է նաև վրաց-թուրքական հարաբերությունների զարգացման տեսական ասպեկտներից:
4. Կարծում ենք, որ ծավալային առումով երկրորդ գլուխն ուռճացված է և հեղինակը խորամուխ լինելով վրաց-թուրքական տնտեսական համագործակցության տարբեր ասպեկտների վրա, միաժամանակ, հեռացել է իր հետազոտության բուն խնդրից՝ «փափուկ ուժի» տնտեսական գործիքակազմի պրակտիկ դրսևորումների վրա կենտրոնացումից: Մասնավորապես, աշխատանքն ավելի կշահեր, եթե հեղինակը ատենախոսության այս հատվածում դիտարկեր Վրաստանի Հանրապետության Աջարիայի տարածաշրջանում թուրքական «փափուկ ուժի» պրակտիկ դրսևորումներին և Թուրքիայի կողմից Աջարիայի «տնտեսական կլանման» գործընթացին, դրանից բխող բոլոր հետևանքներով հանդերձ: Իհարկե, Աջարիային անդրադարձ կա երրորդ գլխում, բայց ավելի պատմական, էթնո-կրոնական գործոնների վրա շեշտադրմամբ:
5. Ատենախոսություն կշահեր, եթե հեղինակն ավելի հանգամանալից անդրադառնար նաև Թուրքիայի «փափուկ ուժի» կիրառման այնպիսի գործիքակազմերին, ինչպիսիք են մշակութային և կրթական նախաձեռնությունները: Ինչպես նաև իրենցից որոշակի գիտական և վերլուծական հետաքրքրություն կարող էին ներկայացնել նաև տվյալները, թե որքանով էր «թուրքական հետք» նշմարվում Վրաստանի հայտնի ներքաղաքական գործընթացներում (օրինակ՝ «Վարդերի հեղափոխություն»), կամ էլ օրինակ՝ այսօր Վրաստանի կառավարող էլիտայի ներկայացուցիչներից արդյ՞ոք կան այսպես կոչված «թուրքական ազդեցության գործակալներ», որոնք կրթություն են ստացել թուրքական ուսումնական հաստատություններում, կամ համատեղ պատմության դասագրքեր են գրել թուրք պատմաբանների հետ:

Նշված դիտողությունները էականորեն չեն գցում ատենախոսության գիտական արժեքը: Ատենախոսության եզրահանգումները գիտական են: Ատենախոսության արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ Թուրքիայի փափուկ ուժը կարևոր ազդեցություն ունի Վրաստանի քաղաքական և հասարակական համակարգերի վրա: Հեղինակը շեշտում է անհրաժեշտությունը գնահատելու և համակարգելու արտաքին դերակատարների ազդեցության գործիքները, ինչը հնարավորություն է տալիս հասկանալու քաղաքական գործընթացների դինամիկան տարածաշրջանային մակարդակում:

Հեղինակի հրատարակած գիտական հոդվածներում արտացոլված են ատենախոսության հիմնական դրույթները, որոնք ունեն ինչպես տեսական, այնպես էլ

գործնական նշանակություն: Ելնելով վերոհիշյալ հանգամանքներից գտնում եմ, որ ԻԳ.00.02 - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար Անահիտ Արմենի Սերոբյանի **«ԹՈՒՐՔԻԱՅԻ ՓԱՓՈՒԿ ՈՒԺԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ»** թեմայով ատենախոսությունը համապատասխանում է քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար ատենախոսություններին առաջադրվող պահանջներին:

Պաշտոնական ընդդիմախոս, քաղաքական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր ---------- Խ. Գալստյան

Քաղաքական գիտ. դոկտոր Խ. Ս. Գալստյանի ստորագրությունը հաստատում եմ

Երևանի պետական համալսարանի գիտական քարտուղար,

բանասիրական գիտ. թեկնածու, Մ. Վ. Հովհաննիսյան

ք. Երևան
09, հոկտեմբերի, 2025 թ.